

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Կոմբի նախարարութեան անկումով մինչդեռ կարծւում էր, որ կաթոլիկ եկեղեցու հասարակապետութիւնից անջատումը համեմատաբար ազատուած է վտանգից, սակայն նախարար Բուզին շատ աւելի վճռական դիրք ըռնէց այդ խնդրի նկատմամբ, քան իւր նախորդը: Սրինադի քննութեան համար արդէն տեղի են ունեցած 7—8 նիստեր և հասարակապետականներից մի քանիսի առաջարկած այլ և այլ խնդիրները հարցը ձգձգելու համար՝ մերժուած են, ինչպէս մերժուած է նաև ծայրահեղ ձախակողմեանների առաջարկը՝ կաթոլիկ եկեղեցու ֆրանսիայում գտնուած ամբողջ գոյքը պետական յայտարարելու նկատմամբ: Բայց իրողութիւնն այն է, որ անջատման օրէնքն արդէն ընդունուած է և այժմ տեղի ունի խորհրդածուծութիւն մի միայն մանրամասնութեանց մասին: Առաջին յօդուածը, որի բովանդակութիւնն է.


— Հասարակապետութիւնը ապահովում է խղճի ազատութիւնը և երաշխաւորում ժամակարգութեան ազատութեան համար՝ միայն այն սահմանափակումներով, որոնք ցոյց կբերուին ներքեւում և առաջ են դաշխ հասարակաց կարգապահութեան և անդորրութեան պահանջներից. — ընդունուած է:

Զայների ահադին մեծամասնութեամբ ընդունուած է նաև երկրորդ յօդուածը (338 ձայն. 227-ի դէմ), որի բովանդակութիւնն է հետևեալը:

«Հասարակապետութիւնը չի ճանաճում և չի վարձատրում ռոճկով որևէ դաւանութեան պաշտօնեաներին, այդ պատճառով սոյն օրէնքը հրատարակելուց յետոյ առաջին յունուար ամսից պետական, նահանգական և հանրային նախահաշիւներից հանւում են այն ծախսերը, որոնք լինում էին եկեղեցականութեան համար. դոյութիւն ունեցող բոլոր կրօնական հաստատութիւնները փակւում են:

Սակայն այստեղ երևան եկաւ, թէ ռըբան դժուարին է ընդունել տալ եկեղեցին տէրութիւնից անջատելու օրէնքը կանոնաւոր հետևողականութեամբ: Զափաւոր ուղղութեան պատկանող պատգամաւոր Սիբելի առաջարկութեամբ յօդուածի մէջ ձայների առաւելութեամբ տեղի ունեցաւ սրբադրութիւն, որով նախահաշուի մէջ կարող են մտնել ճեմարաններում, կոլլէժներում, դպրոցներում, հիւանդանոցներում, ապաստանարաններում և բանտերում պաշտօն կատարող քահանայից վարձատրութեան համար հարկաւոր դումարներ: Սակայն ընդունուած վերոյիշեալ երկու յօդուածով արդէն խախտուած է

Ֆրանսիայի և պապականութեան դաշինքը՝—կոնկորդատը և եկեղեցին պետութիւնից անջատուած: Ապրիլի 17-ին ընդունուեց նաև երրորդ յօդուածը, որով ժախուած հիմնարկութիւնների գոյքը տրւում է նոր հիմնուող դաւանակցական ընկերակցութիւններին:



ԱՆԱՊԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Դ.

Պախում հիմնադիր վանքերի և վանական կեանքի. Անապատականների հակումներ: Կրօնաւորները որպէս զէնք իրանց մեծաւորների ձեռքին: Կրօնաւորների մոլութիւններ.

Վանական կեանքի կանոն սահմանողն է թերայիգացի Պախումը, որ ծնուեց 292 թուին: Մեր եկեղեցին էլ տօնում Պախումի յիշատակը, սակայն մեր հոգևոր գրքերի մէջ¹⁾, բաւական տեղեկութիւն ունենք Պախումի մասին: Վարք Հարանցը տալիս է մեզ Պախումի ուղղութեան մասին մի քանի տեղեկութիւններ, մէջ բերելով նրա ասածները կամ վճիռները կրօնաւորական կեանքի երևոյթներին մասին. նրա կենսագրութեան մասին տեղեկութիւն ստանում ենք Յայամաւուրքից և Վարք Սրբոցի 12-րդ հատորից:

Պախումը, (Պախումէոս կամ Պաքումէոս, Պաքումէոս Պաքմէոսը) հեթանոս ծնողների զաւակ էր, սկզբում՝ զինուոր. հաւատաց Քրիստոսին և դեռ չքմկրտուած բան-

1), Յայամաւուրք Ապրիլի ԻԸ, Ահլի ԻԱ, Բ կցորդ: Բ. Վարք հարանց Ա. հատ. 92—93 453, 647, Նոյն Բ. հատ. 167, 398, 407, 422, 476. 490: Դ. Լիակատար Վարք Սրբոց հատ 12-որդ.